

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	07.10.2020թ. ՀՕ -449-Ն
Հրատարակումը	07.10.2020թ.
Ուժի մեջ է	08.10.2020թ.

համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացման համաձայն՝ սահմանվել է, որ շահութահարկով հարկման բազայի որոշմանն նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն՝ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ը անհուսալի նանաչված ակտիվների մասով մինչև դրանց անհուսալի նանաչելը հաշվարկված և նախկինում հարկմանն նպատակով համախառն եկամտից նվազեցված՝ տվյալ ֆիզիկական անձին ներված (այդ թվում՝ մասնակի) տույժերի և (կամ) տուգանքների գումարները:

Իսկ օրենսգրքում կատարված լրացման համաձայն՝ ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի և վարկային կազմակերպությունների հարկման բազայի որոշմանն նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև այդ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն՝ 2020 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ 91 և ավելի օր չաչխատող (ժամկետանց) համարվող՝ դեռևս անհուսալի չնանաչված ակտիվներում ներառված տույժերը և (կամ) տուգանքները՝ դրանք տվյալ ֆիզիկական անձանց ներելու և այդ մասով ակտիվների հնարավոր կորուստների պահուստի մինչև այդ մասհանումներ կատարած լինելու դեպքում՝ պահուստի նույնպիսի գումարների չափով համախառն եկամտում վերականգնելու դեպքում:

2. Փաստաթուղթ	«Ինքնակամ դրություն ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21.10.2020թ. ՀՕ -461-Ն

Հրապարակումը

22.10.2020թ.

Ուժի մեջ է

23.10.2020թ.

համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է, որ՝

1) ռազմական դրույթյան ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետության ներքին Եվրասիական տնտեսական միության ասրանքի կարգավիճակ ունեցող ասրանքների ներմուծումն ազատում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից, եթե այդ ասրանքներն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարվում են Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը :

2) «2. ռազմական դրույթյան ժամանակահատվածում պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարվող դրոշմավորման ենթակա ասրանքներն ակցիզային դրոշման իշներով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չեն: Իսկ ռազմական դրույթյան ժամանակահատվածում ակցիզային դրոշման իշներով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ասրանքներն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարվելու դեպքում կատարվում է նշում ասրանքի մատակարարման համար սահմանված կարգով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթում :

3. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

21.10.2020թ. ՀՕ -462-Ն

Հրատարակումը

22.10.2020թ.

Ուժի մեջ է

23.10.2020թ.

համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված լրացումներին համապատասխան՝

1) շահութատար կողմ հարկման բազայի որոշման նպատակով շահութատար կվնարողների համար եկամուտ չեն համարվում՝

- բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրույթան ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով գոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնուհու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու կատարվող թանկարժեք և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն անհուսալի ցանաչված՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված ակտիվները (ներառյալ՝ վարկի և այլ գումարները, մինչև դրանց անհուսալի ցանաչվելը և անհուսալի ցանաչվելուց հետո հաշվարկված տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու դեպքում,

- ռազմական դրույթան ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով գոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ամուսնուհու, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից ներվող պարտավորությունները (ներառյալ՝ վարկի և այլ գումարները, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների գումարները),

2) ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի և վարկային կազմակերպությունների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են այդ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրույթան ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով գոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնուհու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու կատարվող թանկարժեք և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն դեռևս անհուսալի ցանաչված ակտիվները (ներառյալ՝ վարկի գումարը, տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու և այդ մասով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մինչև այդ մասհանումներ կատարած լինելու դեպքում՝ պահուստի ուղղված գումարների չափով համախառն եկամտում վերականգնելու դեպքում,

3) Եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝ ռազմական դրույթի Ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով գոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների տված վարկի գումարների ներման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները:

4. Փաստաթուղթ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և 10.12.2020թ. ՀՕ-498-Ն
համարը
Հրատարակումը 30.12.2020թ.
Ուժի մեջ է 01.01.2021թ.

համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխություններին և լրացումներին համապատասխան .

1) բնակավայրերի սահմանների միջով անցնող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածներին, ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկ չի վճարվում,

2) միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին (բացառությամբ բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներին), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդային վահանակին «Գովազդի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1.2-րդ կետով սահմանված կարգով ճանաչված սոցիալական գովազդ տեղադրելու դեպքում՝ գովազդային վահանակի մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ճանապարհային հարկի դրույքաչափը սահմանվել է 0 դրամ,

3) միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին (բացառությամբ բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներին), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող դատարկ գովազդային վահանակների մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ճանապարհային հարկը հաշվարկվում

է օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ կետով սահմանված հարկի 25%-ի չափով ,

4) եթե գովազդային ծառայություններ մատուցող գովազդակիրը միջափոխական, հանրափոխական և մարզային նշանակություն ավտոմոբիլային ճանապարհներին (բացառությամբ բնակավայրերի սահմաններին միջով անցնող տարանցիկ հատվածներին), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը միայն արտաքին գովազդային գործունեության մասով, ապա յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ կետով սահմանված հարկի 10%-ի չափով :

5. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը	և 29.12.2020թ. ՀՕ -507-Ն
համարը	
Հրատարակումը	30.12.2020թ.
Ուժի մեջ է	31.12.2020թ.

համառոտ նկարագիր

Հարկային օրենսգրքում կատարված փոփոխության համաձայն՝ 2020 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներմուծվող կամ ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է ռեզիդենտ շահույթահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահույթահարկ վճարողի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարի :

6. Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը	և 29.12.2020թ. ՀՕ -505-Ն
համարը	

Հրապարակումը 30.12.2020թ.

Ուժի մեջ է 09.01.2021թ.

համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխություններին և յրաջման համաձայն՝ պետական տուրքից ազատվում են՝

1. ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման կամ մաքսատուրքերի և հարկերի վճարումից ազատմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում պետական սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները ,
2. մեկ առաքողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետությունում սահմանով տեղափոխվող՝ ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյից համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները .
3. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքները:

7. Փաստաթուղթ «Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և 27.10.2020թ. ՀՕ-476-Ն
համարը
Հրապարակումը 29.10.2020թ.
Ուժի մեջ է 08.11.2021թ.

համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխություններն առաջին անգամ կարգավորվում են օրենսգրքի 408-րդ հոդվածի 6-րդ մասը, որով պատասխանատվություն էր սահմանված «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված այն գործունեության տեսակների ծանուցումը մեղմացրած կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին համար, որոնց նույն օրենքով արգելվում էր հարկային տարվա որևէ ամսվա արդյունքներով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության, դրան համապատասխանող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հանրագումարի տասը տոկոսից ավելի ին հսկիչ դրամարկային մեքենաներով արտացոլելու համար: Հարկային տարվա որևէ ամսվա արդյունքներով այդ սահմանաչափը գերազանցելու դեպքում համալիր հարկային ստուգմամբ կիրառվում էին օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքները:

Օրենքով սահմանված անցումային դրույթների համաձայն՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրականացվող համալիր հարկային ստուգման արդյունքում հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդած ժամանակահատվածներին վերաբերող իրավախախտումների նկատմամբ օրենսգրքի 408-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված սուղամբ չի կիրառվում, իսկ համալիր հարկային ստուգման արդյունքում կազմված ակտով արձանագրված սուղամբերը հարկվնարողին չեն առաջադրվում, եթե օրենքն ուժի մեջ մտնելու պահին կազմված ակտն Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն չի համարվել անբողոքարկելի:

- 8. Փաստաթուղթ** «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
- Ամսաթիվը** և 27.10.2020թ. ՀՕ -477-Ն
- համարը**
- Հրատարակումը** 29.10.2020թ.
- Ուժի մեջ է** 08.11.2021թ.

համառոտ նկարագիր

Կատարված փոփոխության ամբողջությամբ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է նոր խմբագրության, որի համաձայն՝ նույն հոդվածի աղյուսակի «4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժնի 9-րդ կետում նշված գործունեության տեսակն (Արտաքին տնտեսական գործունեության ասպանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չչրջանակված կամ չամրացված պլաստիկ առք և վանառք, ներմուծում, արտահանում, փոխադրում) իրականացնող անձանց կողմից Գիմբերի գործընթացի հավաստագրման սխեմայով նախատեսված և լիազորմամբ հրամանով սահմանված պահանջները խախտելու դեպքում նշված անձանց համար կիրառվում են առանց ծանուցման՝ ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներին համապատասխան սահմանված գումարի 10 տոկոսի չափով պատասխանատվության միջոցներ:

- 9. Փաստաթուղթ** ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կատարող շնորհակալությունը պատմաբանական վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
- Ամսաթիվը** և 29.12.2020թ. ՀՕ -502-Ն
- համարը**

Հրապարակումը 30.12.2020թ.

Ուժի մեջ է 31.12.2020թ.

համառոտ նկարագիր

«Հայ աստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանվել են դրոշման իշայի մ վնարի հաշվարկման բազա համարվող եկամուտները, որոնց նկատմամբ 2021թ. -ի հունվարի մեկից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշման իշայի մ վնարները հաշվարկում են՝

1) աշխատողների համար հետևյալ դրույքաչափերով.

Մինչև 100 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	1500 դրամ
100 001-ից մինչև 200 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	3000 դրամ
200 001-ից մինչև 500 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	5500 դրամ
500 001-ից մինչև 1 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	8500 դրամ
1 000 001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում	15 000 դրամ

2) անհատն ենարկատերերի և նոտարների համար հետևյալ դրույքաչափերով.

Մինչև 1 200 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	18 000 դրամ
1 200 001-ից մինչև 2 400 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	36 000 դրամ
2 400 001-ից մինչև 6 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	66 000 դրամ
6 000 001-ից մինչև 12 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	102 000 դրամ

12 000 001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում

180 000 դրամ

10. Փաստաթուղթ

«2020 թվականի սեպտեմբերի 1 -ից մինչև դեկտեմբերի 31-ը «Արտաքին տնտեսական գործունեության ասրան քայլի անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրի դասվող ասրանքների (կոնյակի սպիրտ և շշալցված կոնյակ) 100 հազար (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) յիտոր գերազանցող չափով իրացում, այդ թվում՝ արտահանում ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված յրացուցիչ 100 դրամ և (կամ) 25 դրամ պետական տուրքի չափով տնտեսավարող սուբյեկտին օժանդակության տրամադրման ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

08.10.2020թ. N 1659-Լ

Հրատարակումը

09.10.2020թ.

Ուժի մեջ է

10.10.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է 2020 թվականի սեպտեմբերի 1 -ից մինչև դեկտեմբերի 31-ը «Արտաքին տնտեսական գործունեության ասրան քայլի անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրի դասվող ասրանքների (կոնյակի սպիրտ և շշալցված կոնյակ) 100 հազար (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) յիտոր գերազանցող չափով իրացում, այդ թվում՝ արտահանում ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված յրացուցիչ 100 դրամ և (կամ) 25 դրամ պետական տուրքի չափով տնտեսավարող սուբյեկտին օժանդակության տրամադրման ընթացակարգը՝ համապատասխան հավելվածի:

11. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների ծագում ունեցող ասրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.10.2020թ. N 1708-Ն

Հրապարակումը 21.10.2020թ.
Ուժի մեջ է 31.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ արգելվել է Հայաստանի Հանրապետության թուրքական ծագման ապրանքների ներմուծումը՝ համաձայն հավելվածի:

12. Փաստաթուղթ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 3-ի N 1632-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը 23.10.2020. N 1713-Ն
Հրապարակումը 23.10.2020թ.
Ուժի մեջ է 23.10.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմինների կողմից բարեգործության և (կամ) մարդասիրական օգնության նպատակով ստացված դեղորայքի ներմուծումն իրականացվում է առանց դեղի ներմուծման հավաստագրի, չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն և 2004 թվականի հոկտեմբերի 14-ի N 1432-Ն որոշումների կարգավորումները, իսկ մաքսային ընթացակարգով հայտարարագրումը և բացթողումն իրականացվում են ապրանքներն ու դեկլարացիայի տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի հիման վրա, եթե այդ փաստաթղթերով հավաստվում է նույն կետում նշված պետական կառավարման համակարգի մարմինների կողմից ապրանքները որպես բարեգործական և (կամ) մարդասիրական օգնություն ընդունելու հանգամանքը:

13. Փաստաթուղթ «Ռեագմական դրույթան ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետության ներքին ցվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելի ացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը 03.11.2020թ. N 1762-Ն
Հրապարակումը 03.11.2020
Ուժի մեջ է 04.11.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշումամբ՝

1. հաստատվել է ռազմական դրույթի և ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններին Եվրասիական տնտեսական միության ասպրանքի կարգավիճակ ունեցող այն ասպրանքների ցանկը, որոնց ներմուծումն ազատված է ավելի քան արժեքի հարկից, ակցիզայի և հարկից և (կամ) բնասպահական հարկից՝ համաձայն հավելվածի,

2. սահմանվել է, որ «Ռազմական դրույթի և ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները կիրառվում են նույն որոշման հավելվածով սահմանված ասպրանքների անհատույց (նվիրատվությունամբ) մատակարարման գործարքների նկատմամբ:

14. Փաստաթուղթ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 6-ի N 773-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը 26.11.2020թ. N 1829-Ն
Հրապարակումը 27.11.2020
Ուժի մեջ է 28.11.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացումների համաձայն՝

1) ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող և հավաստագրման ենթակա ասպրանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ասպրանքների) վրա փակցված դրոշմանիշերը (դրոշմայիտակները) պետք է համապատասխանեն նաև ներմուծման (համապատասխանության) հավաստագրի համարին և դրանում դեղի հերթական համարին,

2) ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող և հավաստագրման ենթակա ասպրանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ասպրանքների) դեպքում ներմուծման

(համապատասխանում է թյան) հավաստագրի համարին և դրանում դեղի հերթական համարին չհամապատասխանող դրոշման իշերով (դրոշմափտակներով) ապրանքներ իրացնելը ևս համարվում է դրոշմավորման կանոններին խախտում:

15. Փաստաթուղթ

«Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից համման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառումը կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կորոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից համման կարգը, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կորոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշումն ու ժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է

03.12.2020թ. N 1976-Ն
 04.12.2020
 14.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն՝
 Հաստատվել են՝

- 1) հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ համաձայն հավելվածի.
- 2) հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից համման կարգը՝ համաձայն հավելվածի.
- 3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառումը կանոնները՝ համաձայն հավելվածի:

Սահմանվել են՝

1) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը՝ համաձայն հավելվածի,

2) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները՝ համաձայն հավելվածի.

3) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների հաշվառման, հաշվառումից համման կարգը՝ համաձայն հավելվածի.

4) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի,

5) ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

Ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենայի և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ-դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից համման կարգում հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու մասին» N 1318-Ն որոշումը:

16. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1257-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.12.2020թ. N 1943-Ն
Հրատարակումը	03.12.2020
Ուժի մեջ է	04.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են՝

ա) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը՝ հստակեցնելով էլեկտրոնային կտրոնի ձևավորման քայլերի հաջորդականությունը,

բ) էլեկտրոնային ՀԴՄ-ներին ներկայացվող տեխնիկական պահանջները: Մասնավորապես՝ դրանք պետք է ապահովեն աշխատանքը միայն առցանց ռեժիմում, յուրաքանչյուր գործողության պատմության պահպանում, առնվազն 5 տարվա ընթացքում, ծրագիրը պետք է հնարավոր լինի կիրառել հայերենով, ռուսերենով և անգլերենով, բաժիններին կառավարում, ապրանքների կառավարում, ֆիսկալ

հաշվետվություններին գեներացում, կտրոններին գեներացում գործառույթ, կտրոններին վերադարձի ձևակերպում և այլն,

գ) էլեկտրոնային ՀԴՄ-ներին՝ հարկային մարմնում գրանցելու կամ գրանցումից հանելու կարգը, որի համաձայն էլեկտրոնային ՀԴՄ կիրառողները հարկային մարմիններ կայացնում են դիմում՝ հարկային մարմին հաշվետվություններ կայացնելու համակարգի (<https://file-online.taxservice.am>) միջոցով,

դ) էլեկտրոնային ՀԴՄ-ներին միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին մերկայացվող պահանջները,

ե) ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) մերկայացվող պահանջները, որի համաձայն՝ ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է բավարարի «Առևտրի և ծառայություններին մասին» օրենքի 15.1-ին հոդվածով սահմանված՝ էլեկտրոնային առևտրի իրականացմանը մերկայացվող պահանջներին, ինչպես նաև ունենա հնարավորություն կայքում կամ հավելվածում գնորդի կողմից գրանցվելու և իր ծածկագրի և գաղտնաբառի միջոցով մուտք գործելու համար,

2) ՀԴՄ-ներին ներդրման գործընթացով, ինչպես նաև ՀԴՄ-ներին ծրագրային ապահովման մշակմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին մոտՀԴՄ-ի գործառութային (ֆունկցիոնալ) մասին վերաբերող՝ ՀԴՄ-ի ծրագրային ապահովման մշակման ընթացքում առաջացած հարցերի կարգավորման նպատակով հստակեցվել և գործառութային առումով ավելի մանրամասն են նկարագրվել ՀԴՄ-ներին մերկայացվող տեխնիկական պահանջները:

Մասնավորապես՝ հստակեցվել են կիրառվող հասկացությունները, Հայաստանի Հանրապետությանում կիրառվող ՀԴՄ-ներին ներակայացվող ընդհանուր տեխնիկական պահանջները (այդ թվում՝ պետք է ապահովեն ցանցային սնուցման անջատման դեպքում էներգասնկախ հիշողության մեջ դրամական գործարքների մասին տեղեկատվության, ինչպես նաև ծառայողական տեղեկատվության պահպանումը, աշխատունակություն էլեկտրացանցի (էլեկտրասնուցման) վթարային անջատումներից հետո, վնասից թարտերի միջոցով (չիպային, անհարում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վնասից թարտերի տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վնասից զրոյացման դրամական հաշվարկներին իրականացումը և այլն): Հստակեցվել են ՀԴՄ-ներին միջոցով իրականացված դրամական հաշվարկներին (կատարված գործարքներին) մասին տեղեկատվությունը շարժական կապի միջոցով ուղարկվելու դեպքում կիրառվող ՍԻՄ (SIM) քարտերին և տրամադրվող կապին մերկայացվող պահանջները): Սահմանվել են, ՀԴՄ-ներին ծրագրային ապահովումը ապահովող հիմնական գործողությունները, ֆիսկալային հիշողության մեջ գրանցվող տեղեկատվությունը և այլն:

Հստակեցվել են նաև ՀԴՄ-ն շահագործողներին (գլխավոր ադմինիստրատոր, ադմինիստրատոր գանձապահ) կողմից իրականացվող գործառույթները, ՀԴՄ-ի բաժիններին կառավարման, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) կառավարման գործառույթները և այլն:

17. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.12.2020թ. N 1931-Ն
Հրատարակումը	03.12.2020
Ուժի մեջ է	04.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1373-Ն որոշման N2 հավելվածով հաստատվող կարգի 8-րդ կետում, համաձայն որի՝ փոփոխվել են ջրօգտագործող հարկ վճարողների կողմից ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերը անհուսալի ճանաչելու համար անհրաժեշտ պայմանների առկայությունը: Մասնավորապես, վերացվել է գյուղապետարանի՝ հանրության համար տեսանելի տեղում մինչև հաշվետու (հարկային) տարվա դեկտեմբերի 1-ը կետանցված դեբիտորական պարտքեր ունեցող ֆիզիկական անձանց ցուցակը փակցնելու և գյուղապետի հետ համատեղ կազմված ակտի մեկ օրինակը ջրօգտագործող հարկ վճարողների մոտ գտնվելու պահանջը և սահմանվել է, որ տվյալ հաշվետու (հարկային) տարվա ավարտին կետանցված դեբիտորական պարտքերը ճանաչվում են անհուսալի, եթե կետանցված դեբիտորական պարտքեր ունեցող ֆիզիկական անձանց ցուցակը մինչև հաշվետու (հարկային) տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում կամ իր ինտերնետային կայքում, կամ իրենց գործունեությունը համակարգող պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, կամ ուղարկվել է ֆիզիկական անձի էլեկտրոնային փոստի հասցեին:

Որոշումն ուժի մեջ մտնելու տարվան նախորդող տարիների ընթացքում շրջագործողների ընկերությունների կողմից ռոնգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերը, որոնք սահմանված կարգով դուրս չեն գրվել մինչև 2020թ. հունվարի 1-ը, ապա նշված որոշումն ուժի մեջ մտնելու տարում ենթակա են անհուսալի ճանաչման և դուրս գրման, եթե բավարարում են փոփոխված 8-րդ կետով սահմանված պահանջներին:

18. Փաստաթուղթ

«Անշարժ գույքի կադաստր վարող մարմնին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին տեղեկություններ կայացնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի N 680-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

17.12.2020թ. N 2062-Ն

Հրատարակումը

18.12.2020

Ուժի մեջ է

01.01.2021թ.

Համառոտ նկարագիր

Որոշումը՝

1. սահմանվել է անշարժ գույքի կադաստր վարող մարմնին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին տեղեկություններ կայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի,
2. ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկություններ կայացնելու կարգը սահմանելու մասին» N 680-Ն որոշումը:

19. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

17.12.2020թ. N 2091-Ն

Հրապարակումը

18.12.2020

Ուժի մեջ է

01.01.2021թ.

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացումների և փոփոխությունների համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման կարգը համապատասխանեցվել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-332-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններին:

20. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

03.12.2020թ. N 1931-Ն

Հրապարակումը

01.02.2020

Ուժի մեջ է

04.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացման համաձայն՝ սահմանվել է, որ գործատու հանդիսացող իրավաբանական անձի գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու, այդ թվում՝ վերակազմակերպման արդյունքում), անհատնեցարկատիրոջ գործունեությունը դադարեցնելու (հաշվառումից հանվելու), նոտարի պաշտոնից ազատելու, ինչպես նաև գործատու ֆիզիկական անձի մահվան վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, եթե վարձու աշխատողներին (պայմանագրային եկամուտ ստացողներին) համար աշխատանքային (պայմանագրային) հարաբերություններին դադարեցման վերաբերյալ գրանցման հայտեր հարկային մարմիններ կայացված չեն, հարկային մարմինը աշխատանքային (պայմանագրային) հարաբերություններին դադարեցման վերաբերյալ փոփոխություններ է կատարում տեղեկատվական բազայում՝ պետական ռեգիստրի գրանցամատյանում վերոնշյալ դեպքերի գրառման օրը, ամիսը, տարեթիվն անձի անհատական հաշիվ մուտքագրելու միջոցով:

21. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 6-ի N 783-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24.12.2020թ. N 2157-Ն
Հրատարակումը	25.12.2020
Ուժի մեջ է	01.01.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հստակեցվել է հարկային տարվասկզբից վճարված հարկերի և առանձին հարկատեսակների գծով վճարումների մեծությունները: Մասնավորապես՝

- հարկային տարվասկզբից վճարված հարկերի մեծություն որոշման համար հիմք է ընդունվում հարկ վճարողների կողմից հարկային տարվասկզբից միասնական հաշվից վճարված (մարված) մեծությունը՝ հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները և (կամ) մաքսային մարմին կողմից հավաքագրված գումարների մեծությունը,

- ըստ հարկատեսակների հիմք է ընդունվում հարկատեսակի գծով հարկ վճարողի միասնական հաշվից վճարված (մարված) գումարի մեծությունը՝ հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները,

- հարկերի համար սահմանված կանոնները մասով կիրառելի են «այլ հարկեր, վճարներ» սյունակի համապատասխան տողը լրացնելիս,

- միասնական հաշվի միջոցով չմարվող պետական վճարի մասով հիմք է ընդունվում համապատասխան գանձապետական հաշվին կատարված վճարումը:

Սահմանվել է, որ մետադակամ օգտակար հանածոյի արդյունահանման թույլ տվողում ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնափրային և քանակական չափերով, հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրատարակվում են ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N666-Ն որոշման N3 հավելվածով սահմանված ձևին համապատասխան :

22. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածքներում ծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.12.2020թ. N 2209-Ն

Հրատարակումը

30.12.2020

Ուժի մեջ է

31.12.2020թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կատարված լրացումների և փոփոխությունների համաձայն՝ հստակեցվել են .

1. մետադակամ օգտակար հանածոյի արդյունահանման թույլ տվողում ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնափրային և քանակական չափերով, որոնք հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրատարակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N666-Ն որոշման N3 հավելվածով սահմանված ձևին համապատասխան ,

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած՝ 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկի մեծությամբ, 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկի մեծությամբ հաշվարկումը՝ դրամք որոշելով որպես այդ հարկատեսակների գծով հարկ վճարողի միասնական հաշվից վճարված (մարված) մեծությամբ՝ հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները,

3. առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից հարկային տարվա ընթացքում վճարված հարկերի և վճարների մեծություներին ցանկի կազմումը, որի համար հիմք է ընդունվում հարկ վճարողների կողմից հարկային տարվա սկզբից միասնական հաշվից վճարված (մարված) մեծություներ՝ հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները և (կամ) մաքսային մարմնի կողմից հավաքագրված գումարների մեծություները անողական կարգով:

23. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 13-ի N220-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 13.10.2020թ. N 971-Ն

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

20.10.2020

01.01.2021թ.

Համառոտ նկարագիր

Հրամանում կատարված փոփոխությունների համաձայն՝

1. ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2017թ. N220-Ն հրամանի հավելվածը, որի համաձայն սահմանված էր սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ձևը,
2. սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը պարտապահի անունից հարկային մարմնին ներկայացվում է սնանկության կառավարչի կողմից՝ յուրաքանչյուր հարկի և (կամ) վճարի համար սահմանված հարկային հաշվարկի ձևով,
3. սնանկության գործերով կառավարչի կողմից պարտապահի անունից տեղեկատվությունը ներկայացվում է բացառապես պարտապահի գործունեության կատարման ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր հարկի և (կամ) վճարի մասով լրացուցիչ հարկային պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի համար՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի

- հաշվարկներին ներկայացված համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում, ընդ որում՝ պարտապահի գործունեության կասեցման ժամանակահատվածում կառավարիչը ներկայացնում է նաև կասեցման ժամանակահատվածին նախորդող հաշվետու ժամանակաշրջաններին համար ներկայացված ենթակա սակայն չներկայացված հաշվարկները,
4. սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային հաշվարկները սնանկության կառավարիչը ներկայացնում է պարտապահի կողմից սնանկության կառավարչին «Հաշվետվություններին ներկայացված էլեկտրոնային համակարգում» որպես օգտվող գրանցելու և հարկային հաշվարկներ ներկայացնելու ի ազդու թյունն շնորհելու միջոցով,
 5. ՀՀ հարկային օրենսգրքում ու ժիմեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ սնանկության գործերով կառավարչի կողմից չներկայացված տեղեկատվությունը կարող է ներկայացվել վերոնշյալ հրամանով սահմանված ձևով:

24. Փաստաթուղթ «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 14-ի N 692-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը 06.11.2020թ. N 1040-Ն
Հրատարակումը 12.11.2020
Ուժի մեջ է 13.11.2020թ.

Համառոտ նկարագիր

Հրամանում կատարված լրացման համաձայն՝ «Ներմուծված» մակագրության ակցիզային դրույթների և (կամ) դրույթապետական տրամադրման հայտում ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող ապրանքների մասով ներառվում են ներմուծման (համապատասխանության) հավաստագրի համարի (բացառությամբ՝ ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող անասնաբուժական դեղերի, որոնց դեպքում լրացվում է «անասնաբուժական» բառը) և դրանում դեղի հերթական համարի (ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող ապրանքների ներմուծման (համապատասխանության) հավաստագրում դեղի հերթական համարը, բացառությամբ՝ ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող անասնաբուժական դեղերի, որոնց դեպքում լրացվում է «0» թիվը) վերաբերյալ տեղեկությունները:

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2020 թ. IV եռամսյակ	Աճի տեմպ ¹	2020 թ. հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպ ²
1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք						
1.1	ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	հազ. դրամ	368,437,641	96	1,385,199,076	95
2. Արտաքին տնտեսական գործունեություն						

¹ Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակային) ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ: Այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշը եղել է 0, աճի տեմպ չի հաշվարկվում:

² Աճի տեմպը հաշվարկվում է որպես տարվա սկզբի աճողական ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ:

2.1	Արտաքին տնտեսական գործունեության մասնակցների թիվ	անձ	8,378	88	13,841	94
2.2	Արտաքին առևտրաշրջանառության ռեզիդուսների թիվը	հազ. դրամ	1,011,843,243	84	3,463,539,977	89
2.2.1	արտահանում	հազ. դրամ	348,972,788	100	1,231,329,034	98
2.2.2	ներմուծում	հազ. դրամ	662,870,454	77	2,232,210,943	84
3. Ստուգման արդյունքներ						
3.1	Համալիր հարկային ստուգում (ՀՍ)	×	×	×	×	×
3.1.1	Ստուգումների թիվ	հազ.	264	88	876	95
3.1.2	Ավարտված ստուգումների արդյունքում առաջադրված գումարներ	հազ. դրամ	3,798,657.3	160	23,900,503.3	49
3.2	Վերստուգում - լրացուցիչ հայտնաբերում (ՎՍ)	×	×	×	×	×
3.2.1	Ստուգումների թիվ	հազ.	7	44	28	31
3.2.2	Ավարտված ստուգումների արդյունքում առաջադրված գումարներ	հազ. դրամ	1,806,581.2	347	62,879,260.1	561
3.3	Լուծարային ստուգում (ԼՍ)	×	×	×	×	×
3.3.1	Ստուգումների թիվ	հազ.	55	72	222	90
3.3.2	Ավարտված ստուգումների արդյունքում առաջադրված գումարներ	հազ. դրամ	77,928.7	7,867	298,965.5	179
3.4	Թեմատիկ համակցված ստուգում (ԹՍ)	×	×	×	×	×
3.4.1	Ստուգումների թիվ	հազ.	160	48	783	74

3.4.2	Ավարտված ստուգումներին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	57,625.1	52	246,588.9	55
3.5	ՀԴՄ ստուգում	×	×	×	×	×
3.5.1	Ստուգումներին թիվ	հատ	2,793	113	12,077	134
3.5.2	Ավարտված ստուգումներին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	343,084.9	97	1,592,892.8	121
3.6	Զգրանցված աշխատողներին ստուգում (ԶԱ)	×	×	×	×	×
3.6.1	Ստուգումներին թիվ	հատ	151	38	811	67
3.6.2	Ավարտված ստուգումներին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	41,250	37	299,300	78
3.7	Ելակետային տվյալների ստուգում (ԵՍ)	×	×	×	×	×
3.7.1	Ստուգումներին թիվ	հատ	-	-	11	13
3.7.2	Ավարտված ստուգումներին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	-	-	446	2
3.8	Ակցիզային դրոշման իշխանության և դրոշմաստացիներին ստուգում (ԱԿ / ԴՍ)	×	×	×	×	×
3.8.1	Ստուգումներին թիվ	հատ	92	657	221	171
3.8.2	Ավարտված ստուգումներին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	29,278	-	60,644	273
3.9	Հսկիչ գնում (ուսումնասիրություն)	×	×	×	×	×
3.9.1	Ուսումնասիրություններին թիվ	հատ	21	33	137	87
3.9.2	Ավարտված ուսումնասիրություններին արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	5,947	131	13,207	94

3.10	Միասնական հաշվի մուտքագրման գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն	×	×	×	×	×
3.10.1	Ուսումնասիրությունների թիվ	հատ	615	54	2263	96
3.10.2	Ավարտված ուսումնասիրությունների արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	150	-	65,869	61
3.11	ԶՓՄ (չափագրման ուսումնասիրություն)	×	×	×	×	×
3.11.1	Ուսումնասիրությունների թիվ	հատ	18	26	75	35
3.11.2	Ավարտված ուսումնասիրությունների արդյունքում առաջադրված գումարներ	հազ.դրամ	-	-	-	-
4. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ						
4.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	հատ	392	98	2,318	151
4.1.1	բավարարվել է	հատ	103	49	1051	138
4.1.2	բավարարվել է մասնակի	հատ	13	81	76	78
4.1.3	մերժվել է	հատ	193	160	734	149
4.1.4	կասեցվել է	հատ	3	-	5	167
4.1.5	կարգվել է՝	հատ	80	163	452	247
4.1.6	վերստուգում	հատ	-	-	-	-

4.2	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննուկալում անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված ծառայողական քննուկալում քննարկված միջոցառումներ, որից՝	հատ	33	132	103	106
4.2.1	կարգապահական պատասխանատվություն և ենթարկված ծառայողների թիվ	անձ	21	140	91	157
4.3	ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հեռախոսագծերի կենտրոնի կողմից ստացված հարցադիմումներ, որից՝	հատ	43,674	65	263,105	105
4.3.1	կատարվել է	հատ	43,584	65	262,273	105
4.4	Գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից և ՀՀ ՊԵԿ-ի դեմ մերկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման մերկայացված վարչական ակտեր, սնանկության դիմումներ	x	x	x	x	x
4.4.1	Գանձման որոշումներ, բավարարված ՀՀ ՊԵԿ-ի կողմից մերկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման մերկայացված վարչական ակտեր և սնանկության դիմումներ	հատ	6,087	71	23,837	82
4.4.1.1	Գանձման որոշումների, բավարարված ՀՀ ՊԵԿ-ի կողմից մերկայացված հայցադիմումների, հարկադիր կատարման մերկայացված վարչական ակտերի և սնանկության դիմումների գումար	հազ. դրամ	24,092,676	113	83,571,055	120

4.4.2	Մերժված ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտեր և սնանկության դիմումներ, այդ թվում՝	հատ	114	2	150	1
	սնանկության դիմումներ	հատ	9	100	34	106
4.4.2.1	Մերժված ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտերի և սնանկության դիմումներին գումար, այդ թվում՝	հազ. դրամ	546,306	19	694,814	6
	սնանկության դիմումներին գումար	հազ. դրամ	65,173	212	200,218	223
4.4.3	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված քննության ընթացքում գտնվող հայցեր և դիմումներ	հատ	1	4	143	311
4.4.3.1	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված քննության ընթացքում գտնվող հայցերի և դիմումներին գումար	հազ. դրամ	100	-	7,807	16
4.4.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներին քանակ, այդ թվում՝	հատ	440	156	1,383	130
4.4.4.1	բավարարված	հատ	963	2,049	482	328
4.4.4.2	մերժված	հատ	271	678	124	92
4.4.4.3	քննության ընթացքում գտնվող	հատ	3,093	1,154	2,297	256
4.4.5	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներին գումար, այդ թվում՝	հազ. դրամ	7,999,666	148	25,910,920	28
4.4.5.1	բավարարված	հազ. դրամ	955,777	31	11,898,469	247

4.4.5.2	մերժված	հազ . դրամ	627,220	76	52,675,116	2,886
4.4.5.3	քննու թյ ան ընթացքում գտնվող	հազ . դրամ	84,605,318	1568	91,143,071	174
4.5	ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվող օպերատիվ -ին տախտու գակ ան միջոցառումներին արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվություն կիրառում և հարկային պարտավորություններին առաջադրում	x	x	x	x	x
4.5.1	Հարուցված վարչական վարույթ	հառ	194	46	1309	99
4.5.1.1	Պարտավորություններին հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ վարչական ակտ	հառ	305	65	1,299	107
4.5.1.2	Հաշվարկված և գանձման առաջադրված պարտավորություններին գումար	հազ .դրամ	186,794	26	1,807,136	60
4.5.1.3	Վարչական վարույթը կարգելու վերաբերյալ որոշումներ	հառ	21	95	50	56
4.6	ՀՀ Հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական վարույթներ	x	x	x	x	x
4.6.1	Հարուցված վարույթներ	հառ	147	213	249	149
4.6.1.1	Կազմված վարչական ակտեր	հառ	136	197	234	140
4.6.1.2	Վարչական վարույթը կարգելու վերաբերյալ որոշումներ	հառ	11	367	15	188
4.6.1.3	ՀՀ Հարկային օրենսգրքի 423-րդ հոդվածի համաձայն հաշվարկված փոխհատուցման գումար	հազ . դրամ	9,424	96	20,591	78
4.6.1.4	ՀՀ Հարկային օրենսգրքի 422-րդ	հազ .	43,426	464	77,051	38

	հողվածի համաձայն հաշվարկված տուգանքի գումար	դրամ				
4.7	Վարչակամ տույժն անակելու մասին որոշումներ (բացառությամբ 4.8 կետում նշված դեպքերի)	x	x	x	x	x
4.7.1	որոշումներ թիվ	հատ	8,426	110	39,675	124
4.7.2	փաստացի գանձված գումար	հազ . դրամ	160,779	72	524,432	82
4.8	Վարչակամ իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182 ¹ հոդվածով նախատեսված վարույթներ	x	x	x	x	x
4.8.1	Հարուցված վարույթներ	հատ	5	25	24	47
4.8.1.1	Վարչակամ տույժն անակելու վերաբերյալ որոշումներ	հատ	2	33	11	55
4.8.1.2	Առաջադրված տույժերի գումար	հազ . դրամ	500	42	2,450	54
4.8.1.3	Վարչակամ վարույթը կարգելու վերաբերյալ որոշում	հատ	1	33	16	123
4.9	ՀՀ ՊԵԿ կողմից հարուցված (վարույթ ընդունված՝ այդ թվում՝ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչություններից) քրեական գործեր	x	x	x	x	x

4.9.1	ՀՀ ՊՆԿ կողմից հարուցված (վարույթ ընդունված՝ այդ թվում՝ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության (վարչության կողմից) քրեական գործեր, այդ թվում՝ նաև՝	հատ	203	125	1,027	124
4.9.1.1	ՀՀ ՊՆԿ թնցնչական վարչության կողմից հարուցված	հատ	11	92	54	61
4.9.1.2	Վարույթը վերսկսած	հատ	12	75	71	125
4.9.1.3	ՀՀ ՊՆԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության կողմից հարուցված	հատ	176	156	566	168
4.9.1.4	ՀՀ -ում այլ նախաքննական մարմնից ստացված	հատ	3	30	24	73
4.9.1.5	Դատախազի կողմից լրացուցիչ թնցնչության վերադարձված	հատ	-	-	3	100
4.9.2	Ավարտված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	220	111	664	126
4.9.2.1	Մեղադրական եզրակացության դատարանում որոշարկված	հատ	14	127	43	78
4.9.2.2	Վարույթը կարգված	հատ	82	130	210	112
4.9.3	Վարույթը կասեցված	հատ	106	108	294	146
4.9.4	Միացվել են մեկ վարույթում	հատ	15	83	86	179
4.9.5	Այլ նախաքննական մարմնի որոշարկված	հատ	3	33	31	89
4.9.6	Դատարան է ներկայացվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններ	հատ	2	33	33	73
4.9.7	Վերականգնված գումար	հազ .դրա	460,272,850	46	2,541,871,375	44

		մ				
4.10	Նոր գրանցված հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	անձ	3,889	44	60,498	182
4.10.1	ֆիզիկական անձ	անձ	2,808	40	54,082	213
4.10.2	իրավաբանական անձ	անձ	1,081	57	6,416	82
4.11	Լուծարված կամ պետական հարկառու միջ հանված հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	անձ	1,145	79	4,886	84
4.11.1	ԱԶ	անձ	1,140	84	4,856	88
4.11.2	իրավաբանական անձ	անձ	5	63	30	11

ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2020 թվականի ամփոփ տվյալներով Ղազախստանի ՀՆԱ-ն ցվագել է 2.6%-ով: Դեռևս 2020 թվականի մարտ ամսին Ազգային ֆինանսների նախարարությունը կանխատեսել էր տարեկան ՀՆԱ-ի 4.1%-անոց աճ, սակայն, հուլիսի և ֆինանսական համաշխարհային շուկաների անկումով պայմանավորված, ապրիլին ցուցանիշը վերանայվել է, որի համաձայն 2020 թվականին ՀՆԱ-ի անկումը կանխատեսվել է 2.1%:
- Եվրոգոտում տնտեսական գործունեությունը կրճատվեց ավելի կտրուկ, քան նախապես ենթադրվում էր 2020 թվականի վերջին: Ցուցանիշների վատթարացում կանխատեսվում է նաև այս ամիս, քանի որ կորոնավիրուսի դեմ պայքարի նոր սահմանափակումները հարվածեցին Եվրոգոտը գերակշռող մասին: Եվրոգոտում 19 երկրներում արդյունաբերության և ծառայությունների ոլորտի համախմբված ինդեքսը դեկտեմբերին գտնվել է 49.1 կետում՝ անելով նոյեմբերի 45.3 կետից: Սպասարկման ոլորտում գործարարակազմակերպություն ինդեքսը նախնական գնահատականներով դեկտեմբերին անել է՝ հասնելով 46,4 կետին, նոյեմբեր ամսվա 41,7 կետի դիրքից: Սակայն ավելի վաղ ակնկալվում էր, որ անը կհասնի 47,3 կետին:

- Համաձայն Համաշխարհային բանկի <<Համաշխարհային տնտեսական հեռանկարներ>> զեկուլյցի հոլդինգը ամսվա տվյալներով՝ 2021 թվականին աշխարհում տնտեսությունը կանի 4%-ով: 2021 թվականին տնտեսական անը Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկիանոսյան երկրներում կկազմի 7.4%, Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ 3.3%, Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում՝ 3.7%, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում՝ 2.1%, Ենթասահարային Աֆրիկայում՝ 2.7%: Համաձայն զեկուլյցի ԱՄՆ-ի ՀՆԱ-ն 2020 թվականի 3.6% անկումից հետո այս տարում կանի 3.5%-ով: Տնտեսություն վերականգնումը, սակայն, կդանդաղի, քանի որ գլխավոր ռիսկերը դեռևս շարունակում են գոյություն ունենալ: Համաշխարհային բանկի գնահատմամբ Հայաստանի տնտեսությունն անկումը 2020 թվականին կազմում է 8%, 2021 թվականին տնտեսական անը կկազմի 3.1%, իսկ 2022 թվականին 4.5%: Տարածաշրջանի համար նշվում է, որ 2021 թվականին տնտեսությունն անը կլինի չափավոր՝ մինչև 3.3%, Կենտրոնական Եվրոպայում անը նախատեսվում է 3.6%, Ռուսաստանում՝ 2.6%, Թուրքիայում՝ 4.5%, Ադրբեյջանում՝ 1.9%: Տարածաշրջանում տնտեսությունն անի կարգավորման հեռանկարը հստակ չի երևում աշխարհաքաղաքական լարվածություն սրման ռիսկի պատճառով:
- 2020 թվականի հոլդինգ-նոյեմբեր ամիսների վերջին Տաշիկստանում մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառությունը կազմել է 28,9 միլիարդ սոմոնի (2,54 միլիարդ դոլար), ինչը 2019 թվականին նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշից 7,3 %-ով պակաս է: Այս մասին դեկտեմբերի 23-ին հաղորդել է «Ավեստա» գործակալությունը՝ հիմք ընդունելով տնտեսական զարգացման և առևտրի նախարարությունից հրատարակած տվյալները: Տվյալների համաձայն՝ Տաշիկստանում սննդամթերքի, նյութերի և խառը շուկաներում ավելի քան 10.1 միլիարդ սոմոնի (887 միլիարդ դոլար) ապրանքներ են վաճառվել, ինչը կազմում է ընդհանուր մանրածախ առևտրի 41,6 %-ը: Սննդամթերքի տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր շրջանառության 49.1%-ը, ոչ պարենային ապրանքների բաժինը՝ 50.9%: Բոլոր ապրանքների շարքում ամենամեծ մասնաբաժինը կազմում է նավթամթերքը՝ 15,9% և կենդանիներ առևտրինը՝ 7,6%:
- Մեծ Բրիտանիայի ազգային վիճակագրական ծառայությունը տվյալներով՝ 2020թ. երրորդ եռամսյակի վերջնական տվյալներով երկրի ՀՆԱ-ն տարեկան արտահայտությամբ նվազել է 8.6%-ով, իսկ եռամսյակային կտրվածքով՝ անել է ռեկորդային 16%-ով: 2020թ. երկրորդ եռամսյակին ՀՆԱ-ն տարեկան արտահայտությամբ ընկել էր 20.8%-ով, իսկ եռամսյակային կտրվածքով՝ 18.8%-ով: Տնտեսությունն հիմնասյունը համարվող ծառայություններն ոլորտում անը երրորդ եռամսյակում կազմել է 14.7%՝ եռամսյակային արտահայտությամբ: Նախորդ եռամսյակին գրանցվել էր 18.2%-անոց անկում: Ծիցարարության ոլորտում անը կազմել է 41.2%՝ նախորդ եռամսյակին գրանցված 32.7% անկման փոխարեն::